ՄԻ ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Այսօր, մեր գիւղացիներգու բանաստեղծ Գրիգոր Բալասեանին առաւելապէս խրախուսելու եւ նրա գրական երկերի հրատարակութեան միջոց տալու համար՝ միտք յղացաւ մեզանում մասնաւոր դիմումներ անելով ազնիւ զգացմունքներով տոգորուած անձանց՝ մի համեստ գումար ժողովելու հրաւէր կարդալ։

Բալասեանը արդէն ծանօթ գրիչ է հայրենի գրականութեանը։ Լոյս են տեսել առանձին գրքերով նրա գիւղացիներգական – տաղաչափական պօէմաներից երկուսը «Ռոստոմ եւ Սալման» եւ «Առիւծաձեւ Մհեր»։ Մշտական աշխատակից է «Բազմավէպ»ի եւ «Գեղունի»ի եւ վերջերս «Բանասէր»ի, «Մուրճ»ի եւ «Լումայ»ի։ Տպագրութեան համար արդէն պատրաստ են հետեւեալ աշխատութիւնները. 1. Սասունցի Դաւիթ (երկու հատոր), 2. Աղիմէլիք եւ Սանասար (տպուած Լումայում), 3. Պըստիկ Մհեր, 4. Սասմայ ծռերի յուշիկներ, 5. Տպաւորութիւններ Պարսկաստանից, 6. Որբիկների արցունքները (զգայուն ոտանաւորներ), 7. Ռուսահայոց նորագոյն բանաստեղծական դէմքեր, 8. Մեր ներկայ նշանաւոր գրողները, 9. Իւրիյ Վեսելովսկի եւ Ս. Շահազիզ (*) (կենսագրական-քննադատական), 10. Բանաստեղծութիւններ (I եւ II հատոր) եւ այլն...

Բացի այդ աշխատութիւններից յարգելի բանաստեղծը այս տարուանից հիմք է դրել հայ գրականութեան մէջ առաջին անգամ լոյս տեսնող մի զուտ բանաստեղծական-գեղարուեստական հանդէսի «ԶԳԱՑՄՈՒՆՔ» անունով։ Զգացմունքը՝ միշտ Հ. Ղ. Ալիշանի խնկելի յիշատակին նուիրուած՝ լոյս կը տեսնէ արտասահմանում շարունակաբար տարեկան երկու գիրք, ինչպէս Արաքսը։ Թէ հանդէսի գոյութիւնը շարունակելու եւ թէ վերը յիշած երկասիրութիւնները հրատարակելու համար կը յուսանք բարեմիտ ազգայինները չեն խնայիլ իրանց լումաները, այլ շուտով օգնութեան կը հասնեն արժանաւոր նուիրատուութիւններով, որի մասին ժամանակին արձանագրութիւն կը լինի պարբերական թերթերում։ Ուղղակի դիմելու են՝ Schoulaver (Caucase) Mr. Grégoire Balassiantz.

ՀԱՄԱԿՐՈՂՆԵՐ

(*) Այս յօդուածը լոյս կը տեսնէ նախ «Բանասէր»ի մէջ։

ԽՄԲ.